

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Պ. ԽԱՆՁԱՏԵԱՆԻ ՇՔԱՆՇԱՆԸ

Փետր. 21ին Մուրատեան վարժարանի շքեղ դահլիճին մէջ տեղի ունեցաւ ազգային հանգիստաւորութիւն մը՝ ի ներկայութեան հայ եւ ֆրանսացի նշանաւոր անձնաւորութիւններու, լրագրողներու եւայլն:

Հանգէսին կը նախագահէր երեսփոխան Հանրի Լորէն, թղթակից անդամ ֆրանսական կաճառին եւ նախագահ Մուրատեան վարժարանի հովաճնաւորիչ մասնախումբին:

Թունուզի եւ Մարտի վեհապետներուն ֆրանսայի ներկայացուցիչ Նորին վսեմութիւն Սի Պէն Կապրի ֆրանսերէն գեղեցիկ ճառով մը վեր հանելէ վերջ քարտիսագէտ Պ. Խանզատեանի արաբական ուսումնասիրութիւնները Ալեքիոյ հարիւրամեակին առթիւ իր աշխատասիրած Աւլասին՝ իր վեհապետին կողմէ հանդիսաւոր կերպով անոր վիզը անցուց արաբական իֆրիխար պատուանշանին հրամանատարի աստիճանը, ի գնահատութիւն գիտական մանրակրկիտ եւ յոգնաշան աշխատանքի մը:

Պ. Խանզատեան հմուտ եւ ջղուտ ճառով մը ներկայացուց հայ աշխարհագէտներու դերը պատմութեան մէջ, ի խնդիր արաբական կայսրութեան սահմաններուն եւ տիրապետած երկիրներուն քարտիսաշինութեան դժուարին գործին: Դարձեալ վեհապետին հայ տպարանատէրներէին որ վերջին դարերուս առաջին անգամ արաբական լեզուով քարտէսներ տպագրեցին ֆրանսական աշխարհագրական գիտութեանց արդի ըմբռնումներով: Շնորհակալութիւն յայտնեց յետոյ Արաբ ժողովուրդին՝ որ թրքական վերջին դէպքերէն փախտական հայութեան ստուար մեծամասնութիւնը հիւրասիրած էր Սիւրիոյ հողերուն վրայ:

Ն. Վ. Սի պէն Կապրի կրկին անգամ խօսք առնելով, հաւատեց ներկաներուն որ հայ եւ արաբ գործակցութիւնը կը շարունակուի նաեւ ըլլայ Մարտի, ըլլայ Ալեքիոյ մէջ:

Պ. Հանրի Լորէն փակեց հանգէսը գնահատելով հայ հանճարը յանձին Պ. Խանզատեանի եւ մաղթելով հայ եւ արաբ սեղմ համագործակցութիւն մը ֆրանսական հովանաւոր դրօշին ներքեւ, ի խնդիր գիտութեան նուաճումներուն Արեւելքի մէջ եւ ի խնդիր երբեակ ազգերու մը մտտեւ բարձրացումին:

Պ. ՇԱՐԼ ՏԻԼԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՏԻՏՂՈՍԸ

Փետր. 22ին տեղի ունեցաւ խանդավառ ընդունելութիւն մը ի պատիւ Պ. Շարլ Տիլի, անդամ ֆրանսական կաճառին եւ նախագահ Բարիզի հայկական ուսմանց ընկերութեան:

Սրահը լեցուած էր խուռն բազմութեամբ մը: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Գերպ. Պապիանեան, Գերպ. Քէտիճեան Վ., Հ. Թ. Վ. Սիրունեան, Գերպ. Պապաշանեան, Պ. Ն. Նորատունկեան, Պ. Աւետիս Ահարոնեան, Պ. Սիւնապեան, Պ. Զօպանեան, իշխան երկայնաբազուկ Արղութեանց, իշխան Կորկանօֆ, Տոթ. Վ. Թորգոմեան եւ Տոթ. Եղուպեան, փրփ. Մաքլէր, Պ. Հրանդ-Սամուէլ, Ե. Տէր-Անդրէասեան, Երուանդ Թօլայեան եւ բազմաթիւ լրագրողներ:

Պ. Խանզատեան երկու խօսքով դրուատիքը ընելէ վերջ մեծանուն բիւզանդագէտ Պ. Շարլ Տիլի, իր քսանի չափ ակադեմական տիտղոսներուն վրայ աւելցուց վեհապետ Միլիթարեանց Հայկական ճեմարանին ալ զոր բարեհաճեր էր շնորհել Գերպ. Աբրահայրը Հ. Յովհան Ազգեր, որուն շնորհաւորական հեռագիրը՝ ներկաներուն որուն ծափերուն մէջ կարգաց Մեծ. Հ. Յ. Վ. Թորոսեան այդ առթիւ, եւ հակիրճ բառերով բացատրեց ներկաներուն Պ. Շ. Տիլի գիտական հսկայ գործը:

Պ. Շարլ Տիլ ժամ մը տեւող իր չափազանց հետաքրքրական եւ հմտալից ճառախօսութեամբ վեր հանեց հայուն դերը իբր գինուոր, իբր զօրավար, իբր ճարտարապետ եւ նկարիչ բիւզանդական կայսրութեան մէջ: Ազգ մը որ ունեցած է փառաւոր անցեալ մը, պիտի ունենայ նոյնքան փայլուն ապագայ մը:

Պ. Հանրի Լորէն, որ կը նախագահէր հանգէսին, շնորհաւորեց բանախօսը իր ստացած նորագոյն տիտղոսին համար եւ դրուատիքն ըրաւ ֆրանսական հանճարին՝ որ փռչներու տակէն դուրս կը հանէր պատմական իրականութիւններ:

«Հայը որ իր գինուորական հանճարը ի սպաս դրեր է, ըսաւ, անցեալին մէջ ի խնդիր բիւզանդական կայսրութեան, անշուշտ պիտի կարենայ ներկայիս ստանալ իր իսկ ազատութիւնը անմարդաբնակ իր հայրենիքին մէջ: Եւ ֆրանսական հովանաւոր դրօշը պիտի ընկերանայ անոր նուաճումներուն»:

Հոս հանգէսը վերջացաւ խանդավառ ծափերով մէջ:

Յ. ՏՈՊԱՃԵԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ՎԵՆԵՏԿՈՅ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆԷՆ

P. GABRIEL NAHAPETIAN
(de la Congrégation des Méchitharistes de Venise)

LE CALENDRIER INVARIABLE
ET UNIVERSEL ET PAQUES FIXE
AVEC 13 MOIS
(Prix: fr. Suisse 1.40)

Հ. ՂԵՌՆՈՒՄ ՏԱՅԵԱՆ
ՄԱՅՐ ԳԻԻԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆՅ ՎԵՆԵՏԿՈՅ Ի Ս. ՂԱԶԱՐ
1707-1773
(ԳԻՆ՝ ՅՐ. Զ. 6)

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ի ՏԱԼԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
ԷՄԻԼ ՕԹԹՈՅԻ ՈՃՈՎ
ՄԻԶԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԲ
ԱՇԽԱՏԱՍԻՐԵՅ
Հ. ԱԼԵՔԱԽՍ ՅՈՎԱԷՓԵԱՆ
Բ. ՏՊ. ԲԱՐԵՓՈԹՈՒԱՆ
(ԳԻՆ՝ ՅՐ. Զ. 2.50)

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ՇՔԵՂ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՏՈՐ
Ապստոլանքի ե թղթակցութեան համար գիմել հետեւեալ հասցէին՝
Haig Adjémian TAURIS (Perse)

Հ. ՄԱՆՈՒԷԼ ԹԱՇԵԱՆ
ԱԾԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԶԻՆ ԴԱՍԸՆԹԱՅԲ
Բ Տ Ա Ր Ի
ԵՒՐՈՊԱ ԵՒ ԱՍԻԱ
(ԳԻՆ՝ ՅՐ. Զ. 2.20)

ԿԵԱՆՔԻ ՆԱԽՕՐԵԿԻՆ
ՏՂՈՅ ՀԱՄԱՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍԵՐ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿԵՅ
Հ. ԱԼԵՔԱԽՍ ՅՈՎԱԷՓԵԱՆ
(ԳԻՆ՝ ՅՐ. Զ. 2.60)

ՊՕՂ ԵՒ ՎԻՐԳԻՆԻ
ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ
ՊԵՌՆԱՐՏԷՆ ՏԸ ՍԷՆ-ԲԻԼՈՒ
ԹԱՐԳԱՐԱՆԵՅ
ՄԱՆՈՒԿ ՊԷՅ
ՄԱՀՏԵՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՍՏՈՒՐԵԱՆ
Դ. ՏՊ.
(ԳԻՆ՝ ՅՐ. Զ. 1.40)